կիոյ աթոռին ենթարկելու և Գրիգոր Կեսարացին հոն դարձեալ պատրիարք դընելու փորձը ձախողեցաւ, վասնզի Յովհաննէս Խուլ պատրիարք, իր պաշտօնին սպառնացող վտանգը տեսնելով փութաց Ադրիանուպոլիս, ուր էր արքունիքը, և յաջողեցաւ իր դիրքը պահել և 1613 Մայիս 25ին աքսորել տալ Կ. Պոլիսէն Կիլիկիոյ կաթողիկոսը և իրեն ընկերացող երեք եպիսկոպոսները (հմմտ. Գրիգոր Դարանաղցի էջ 180 – 181)։

Սակայն Կեսարացի աննկուն կամքի տէր անձ է։ Յուսահատիլ չի գիտեր։ Ձենք գիտեր ինչպէս, սակայն որոշ է թէ երկու տարի յետոյ, 1615ին, կը յաջողի գրաւել Կ. Պոլսոյ պատրիարքական աթոռը (Աղթամար, էջ 2351 և Գալէմքեարեան, Կենսագրութիւն, Ա. էջ 16)։

Այս ժամանակ արդէն կաթոլիկ հաւատածաւալ քրիստոնէութեան հետևանքները գգալի դառնալ սկսած էին Արևելքի և մանաւանդ Հայոց մէջ։

Հայ եկեղեցականներէն ոմանք յարում ցոյց տալ սկսած էին դէպի կաթոլիկութիւն զանազան նկատումներով և ակնկալութիւններով։

Էջմիածնայ ապաշնորհ կաթողիկոսը՝ Մելքիսեդեկ, այս տխուր դէմքը Հայ եկե-